որ ալիժօվ չխառւին, ու ալիժօվ. զէ Բաղէր Պօնէզանայ Բրէքէֆդն (ինչպէս որ լսել ամ,) զամէն այն բանը կ՚աւիրէր։

1694. ՁՏէր Խաչատուր Ջախնօվիչն՝ Գեր. Վարդան արքեպիսկոպոսն՝ մայիսի 18, Թուրքին ու Թաթրին հեծելութեան ատենը, վիգարիաս կ՚անէ Սդանիսլաւօվու, Սնեադինու, Դխմինիցու, Լիսցայի, և Նատվօրնային։

1696. Վարդան արքեպիսկոպոսն վիզիդօվադ կ՚անէ զմեր Սդանիսլաւօվու եկեղեցին, յունիսի 21. կոնտակով կ՚արգիլէ, որ ժողովուրդն ալ շատ խուրպաներ (մատաղ) չանէ. ոչ քահանայն խուրպանու կամ մատղի մորթած տավրին կաշին և խօլն չառնու. այլ է Սուրունկճիքն։

1698. Աստուածատուր եպիսկոպոսն յայս տարի ի Հռօմայ դարձաւ ի Լօվ̃, սուրբ ժողովին հրամանաւն գօատիւդօր (օգնական) ու սուգցէսօր (յաջորդ) արքեպիսկոպոսութեան Լօվայ. զէրամ Վարդան արքեպիսկոպոսն շատ սուրլիքօվադ արավ, պատճառ դնելով զիրեն ծերութիւնն ու զտկարութիւնն. Բայց չիտակն սանելով, ինքն՝ օտար երկրի ըլլալով, ու զամենայն բանն Բադերնէրուն (լատին կրօնաւորք) խրերօվ̃ անելով, շատ անգամ զժողովրդին սիրտն աղրեց. յետքը ոչ ժողովուրդն, ոչ քահանայք աէպ (պատիւ, յարգանք) չէին դնել. ասոր համար հնարքով զԱստուածատուր եպիսկոպոսն ի հոս եբեր, և զամենայն իշխանութիւնն ձեռքն եդիր. զարտ (զատ, բաց ի) զիրէն աթոռն ու զարհիեպիսկոպոսութեան գիդուլն (titre)։